

Մեղա Գաբրիելյան

ԵՊՀ

**ԲԱՌԱԽԱՂԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ
Ռ. ՔԻՓԼԻՆԳԻ «ԹԵ ԻՆՉՊԵՍ ՈՒՂՏԸ ԴԱՐՁԱՎ
ՄԱՊԱՏԱՎՈՐ» ՀԵՔԻԱԹՈՒՄ**

Սույն հոդվածում քննության է առնվում թարգմանաբանության մեջ թերևս ամենաբարդ խնդիրներից մեկը՝ բառախառնի թարգմանության խնդիրը՝ Ռ. Քիփլինգի հեքիաթի նյութի հիման վրա: Հեքիաթի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ վերջինիս սյուժեն կառուցված է մի շարք բառախառնի վրա, ինչը պարտադրում է թարգմանչին ստեղծագործական մոտեցում ցուցաբերել թարգմանական ստրատեգիաների հարցում, երբեմն՝ համադրելով դրանք՝ թիրախ տեքստում համարժեք ընկալում ապահովելու համար:

Հիմնաբառեր. *բառախառն, թարգմանություն, Ռ. Քիփլինգ, հեքիաթ, համարժեք ընկալում:*

«Թե ինչպես ուղտը դարձավ սապատավոր» (“How the Camel Got His Hump”) հեքիաթը առաջին անգամ տպագրվել է St. Nicholas Magazine-ում 1898 թ.: Այն «Պատմվածքներ հենց այնպես» ժողովածուի տասներկու հեքիաթներից է և

հայերեն թարգմանվել է Ա.Բուդադյանի և Ս.Սեֆերյանի կողմից:

Ամբողջ պատմությունը կառուցված է բառախաղերի վրա, որն ավելի է դժվարացնում թարգմանչի խնդիրն ու պահանջում ստեղծագործական մոտեցում՝ թարգմանական ստրատեգիաների ընտրության հարցում: Առաջին գույգ բառերը *Howling* և *Howler* համապատասխանաբար նշանակում են *ռոնացող, կաղկանձող, մռայլ, վհատ, սարսափելի, սոսկալի, աղաղակող և ողբացող, սգացող, ծիծաղելի ու հիմար սխալ*: Սակայն այս բառերի բառարանային իմաստները լրացուցիչ փոխաբերական իմաստ են կրում: *Howling Desert*¹ բառակապակցության մեջ *Howling*-բառը իմաստային առումով ծանրաբեռնված է, այսինքն, դրանում մի քանի իմաստ է միահյուսված՝ *to howl*- սուլել, շվշվացնել (նկատի ունի անապատում սուրող քամու սուլոցը), *howling* – մռայլ, վհատ (նկատի ունի այն, որ անգործությունից ու անպտուղ լինելուց կարելի է մռայլ կերպարանք ստանալ): Հեղինակը *Howler* է անվանում ուղտին, որը, ինչպես նշվում է, չէր սիրում աշխատել և ոչինչ չէր ստեղծում: Սա ուղտի և անապատի ընդհանրություններից մեկն է: Բացի այդ, նա անընդհատ հառաչում էր, հատկապես, երբ նրա հետ աշխատանքի մասին էին խոսում:

¹ “Howling wilderness” արտահայտությունը հանդիպում է Հին կտակարանի Երկրորդ օրենքում (Deuteronomy 32:10) “He sustained him in a desert land, in a howling wilderness waste...” Հայերենում ունենք «Նա հոգաց նրա պետքերն անապատում, ջրից գուրկ վայրում...»:

Այսինքն՝ անապատին և ուղտին միավորում էր նաև ձայնային տարրը. անապատում քամին էր սուլում, իսկ ուղտը անընդհատ հառաչում էր՝ ի նշան դժգոհության և արհամարհանքի:

In the beginning of years, when the world was so new-and- all, and the Animals were just beginning to work for Man, there was a Camel, and he lived in the middle of a Howling Desert because he did not want to work; and besides, he was a Howler himself.

Շատ վաղուց, դարեր առաջ, երբ դեռ աշխարհը նոր էր ու կենդանիները հենց նոր էին սկսել աշխատել Մարդու համար, կար, չկար մի Ուղտ կար, և նա ապրում էր Հառաչող անապատում, որովհետև չէր ուզում աշխատել, և բացի այդ, ինքն էլ Հառաչող էր:
(Ս. Բուդաղյան)

Դարեր առաջ, երբ աշխարհը դեռ այնքան մանուկ էր, և Կենդանիները նոր-նոր էին աշխատում Մարդու համար, մի Ուղտ կար, որը աշխատանքից խուսափելու համար ապրում էր Ոռնացող Անապատում, մանավանդ ինքն էլ՝ Ոռնացող էր:

(Ս. Սեֆերյան)

Երկու թարգմանություններում էլ առաջնային ընդհանրությունն է համարվել ձայնային տարրը («ոռնացող»/«հառաչող»), և հետևաբար անտեսվել է երկրորդը՝ այն, որ երկուսն էլ անբան, ամուլ էին: Ուստի հայերեն տարբերակներում բառախաղի մեծ կորուստ ունենք:

Հաջորդ բառախաղը կառուցված է *humph* և *hump* բառերի վրա: *Humph* բառը ձայնարկություն է, որն արտահայտում է դժգոհություն ու կասկած: Բառախաղի մեջ ընդգրկվել են *Hump* բառի երկու իմաստները՝ *սապատ* և *վատ, մոայլ տրամադրություն*: Բառախաղի շնորհիվ հեքիաթի վերջում ուղտի դժգոհության ձայնարկությունը (*humph*) նրա համար բեռ է դառնում՝ սապատ (*hump*):

When anybody spoke to him he said “Humph! and no more.

Երբ որևէ մեկը խոսում էր նրա հետ, նա պատասխանում էր – Սպպտ:

(Ս. Բուդաղյան)

Երբ մեկը փորձում էր խոսել հետը, շարունակ կրկնում էր. «Ուզ, Ուզ»:

(Ս. Սեֆերյան)

Ա. Բուդաղյանի թարգմանության մեջ *սպպտ* բառը, բացի նրանից, որ այն *սապատ* բառի կրճատված տարբերակն է, որևէ այլ ասոցիացիա չի առաջացնում, առավել ևս, որևէ կերպ չի արտահայտում դժգոհություն կամ այլ զգացմունք: Ս. Սեֆերյանի առաջարկած տարբերակում համարժեք բառախաղ ստեղծելու հաջող փորձ է արված (*ուզ - կուզ*): Սակայն, քանի որ հայերենում չկա *ուզ* բառը և առավել ևս այն զգացմունքային երանգավորում չունի, նպատակահարմար կլիներ մի խորամանկ քայլ կատարել. ...«*ուզ,ուզ*» և փակագծերի մեջ ավելացնել (*որը ուղտերի լեզվով նշանակում*

է «ուֆ»), մանավանդ, որ այս հնարը հատուկ է Քիփլինգի ուճին:

Հեքիաթի մեջ անընդհատ կրկնվող *Humph* բառը մի քանի անգամ հայտնվում է նաև հեղինակային նորաբանություններում.

Three, O Three, I am very sorry for you (with the world so new-and-all), but that Humph-Thing in the Desert can't work.

That Humph-Thing մակդիրը Ա. Բուդաղյանի մեկնաբանությամբ դարձել է՝ «սպպտ» կոչվածը: Իսկ Ս. Սեֆերյանը նույն նորաբանությունը ներկայացրել է *Ուզը Անսպատի* ձևով (Գարելի է՝ *Անսպատի այդ ուզ կոչվածը*):

I'll humph him if you will kindly wait a minute.

Ես նրան «սպպտ» ցույց կտամ...

(Ա. Բուդաղյան)

Ես նրան «ուզ» ցույց կտամ...

(Ս. Սեֆերյան)

Եվ վերջապես երրորդ զավեշտական արտահայտությունը.

Humph yourself!

«Սպպտը» քեզ: (Ա. Բուդաղյան)

Կուզիցդ ամաչիր: (Ս. Սեֆերյան)

Սակայն այս արտահայտությունը հետևյալ մեկնաբանությունն ունի. ինքդ քեզ «ուզ» (այսինքն «ուֆ») ասա, ինքդ քեզնից դժգոհի, հետևաբար՝ դու ես մեղավոր:

Հեքիաթի բարոյախոսությունը միանգամայն ակնհայտ է. ծուլությունը արատ է:

Նորելուկ աշխարհում Ամուլ Անապատի մեջտեղում ապրում էր անբան ուղտը: Նա ամբողջ օրը ոչինչ չէր անում, միայն ծուլորեն փուշ ու տատասկ էր ուտում ու ամեն ինչից դժգոհ «ուզ» էր ասում: Մինչդեռ Ջին, Այծն ու Շունը առավոտից երեկո աշխատում էին Մարդու համար և Երկուշաբթի օրվանից սկսած երեք օր շարունակ ոչ մի կերպ չէին կարողանում համոզել ուղտին՝ միանալ իրենց: Մարդն ու կենդանիները դիմում են բոլոր Անապատների Ջինին՝ խնդրելով խելքի բերել ուղտին: Ջինը խորհուրդ է տալիս ուղտին՝ վերջ տալ «ուզերին» ու գործով զբաղվել: Բայց ապարդյուն: Եվ այս անգամ Անապատների Ջինը որոշում է մի լավ դաս տալ անբան ուղտին ու պատժում է նրան՝ «ուզի» դիմաց մի կուզ դնելով նրա մեջքին: Այդ օրից ի վեր ուղտը կուզ ունի, բայց մենք այն սապատ ենք անվանում՝ նրա զգացմունքները հարգելով: Այդ օրից ի վեր ուղտերն ապրում են ամալի ու վայրի անապատում և կարող են օրեր շարունակ ոչինչ չուտել՝ սապատի շնորհիվ:

You will be able to work now for three days without eating, because you can live on your humph.

Հիմա առանց ուտելու՝ կուզիդ հաշվին կաշխատես երեք օր: (Ս. Մեֆեթյան)

Սա էլ էր Ջինի կախարդանքի մի մասը կազմում:

Հեքիաթի բարոյախոսությունն ամբողջանում է եզրափակիչ բանաստեղծությամբ. ուղտի նման մենք էլ կարող ենք կուզ ձեռք բերել, եթե գործով չզբաղվենք:

Kiddies and grown-ups too-oo-oo,

If we haven't enough to do-oo-oo,

We get the hump –

Cameelious hump –

The hump that is black and blue!

Այս «ուղտային» *cameelious* բառը հեղինակային նորաբանությունն է, որը ստեղծվել է *camel* - ուղտ բառից և “ious” ածականակերտ ածանցից: Հիվանդությունից փրկությունը մեկն է.

The cure for this ill is not to sit still...

Եվ այդ ժամանակ կզգաս, որ բեռդ թևթևացել ու տրամադրությունդ բարձրացել է.

And then you will find that the sun and the wind,

And the Djinn of the Garden too,

Have lifted the hump –

The horrible hump –

The hump that is black and blue!

Black and blue արտահայտության գործածությամբ Քիփլինգը նոր բառախաղ է առաջարկում: Մի կողմից, այն որպես կայուն բառակապակցություն նշանակում է *կասպտուկներով ծածկված*, մյուս կողմից՝ *black* բառը նշանակում է *չար, զայրացած*, իսկ *blue* նշանակում է *ընկճված*: Այստեղ միանում է հեքիաթի հենց սկզբում ներմուծված բառախա-

դի շարունակությունը (*hump* բառի իմաստներն էին սապատ և վատ տրամադրություն): *The hump that is black and blue* նախադասությունը կարելի է հասկանալ երկակիրներն. *Մապատ, որն ամբողջովին կապտուկների մեջ է և վատ տրամադրություն, որից ընկճվում ու չարանում են:* Մինչդեռ հայերեն թարգմանությունն այսպես է հնչում.

*Այդժամ քամին ու այս արևը տաքուկ,
Եվ պարտեզի Ջինը հանկարծ անաղմուկ
Կվերացնեն քո սապատը,
Մարսափելի այդ սապատը,
Որը մի քիչ կապույտ է ու մի քիչ մուգ:*

Այստեղ *black and blue* արտահայտությունը դարձել է *կապույտ ու մի քիչ մուգ*, այսինքն, թարգմանիչը, հաշվի չառնելով բառակապակցության երկիմաստությունը, դիմել է բառացի թարգմանության, որի արդյունքում բառախաղը վերացել է, հետևաբար աղավաղվել է բնագրի իմաստը, քանի որ իմաստի ձևը հենց նույն այդ իմաստի կրողն է:

Թարգմանության վերջնական նպատակը թիրախ ընթերցողի կողմից բնագրի համարժեք ընկալումն է, ուստի թարգմանական ստրատեգիաների ընտրությունը, համադրումը և դրանց ստեղծագործական կիրառումը կարող են որոշիչ լինել:

Գրականության ցանկ

1. Կիպլինգ, Ռ., Արտասովոր հեքիաթներ, թարգմ. Ա. Բուդաղյան, Երևան, 1947:
2. Քիպլինգ, Ռ., Պատմվածքներ հենց այնպես, թարգմ. Ս. Սեֆերյան, Երևան 1974/1992:
3. Kipling, Rudyard, 1979, "Just so Stories", Moscow, Progress Publishers.
4. Kipling, Rudyard, 1998, "Just so Stories" with L.Lewis's Introduction and Notes, Oxford.

SEDA GABRIELYAN – Problem of Translating Pun in R. Kipling’s “How the Camel Got His Hump” – The present article deals with one of the most difficult problems in Translation Studies, the problem of translating pun on the material of the Armenian translation of Kipling’s tale. The choice of the tale is conditioned by the fact that the plot of the story is based on and develops through the use of interwoven puns, thus making translation even more problematic. Hence, the translation strategies chosen by the translator should be implemented more creatively, aiming at the equivalent response of the target reader.

Key words: pun, translation, R. Kipling, tale, equivalent effect.

СЕДА ГАБРИЕЛЯН – Проблема перевода игры слов в сказке Р. Киплинга “Откуда у Верблюда горб” – В статье рассматривается проблема перевода игры слов на материале сказки Р. Киплинга. Выбор материала обусловлен тем фактом, что сюжет сказки основан и развивается переплетением каламбуров, тем самым осложняя задачу переводчика. Для достижения эквивалентного восприятия оригинала целевым читателем в данном случае необходим творческий подход к подбору и сопоставлению переводческих стратегий.

Ключевые слова: игра слов, перевод, Р. Киплинг, сказка, эквивалентное восприятие.